ման նպատակով բնական ծագում ունեցող մատղաշ ծառերի, ինքնացանի ոչնչացման և մինչև ածի դադարեցման աստիճանի վնասման դեպքում, յուրաքանչյուր հեկտարի համար, ըստ վնասված կամ ոչնչացված անտառային կուլտուրաների, բնական ծագում ունեցող մատղաշ ծառերի և ինքնացանի տարիքի՝ մինչև 5 տարեկան՝ **450.000 դրամ**, 6 - 10 տարեկան՝ **575.000 դրամ**, 10 տարեկանից բարձր՝ վերը նշված սակագներով:

Անտառային ֆոնդի հողերում և բնական արոտավայրերում ապօրինի խոտհունձի հետևանքով վնասված յուրաքանչյուր հեկտարի համար՝

մշակված հողեր՝ **300.000 դրամ**, բնական արոտավայրեր՝ բարելավված՝ **100.000 դրամ**, առանց բարելավման՝ **75.000 դրամ**, խոտհարքներից և արոտավայրերից դուրս տարածքներ՝ **100.000 դրամ**,

անտառային տնկարաններում՝

ցանքսի ոչնչացված կամ վնասված յուրաքանչյուր հեկտարի համար՝ **3. 000.000 դրամ,** տնկիների ոչնչացված կամ վնասված յուրաքանչյուր հատի համար՝ մինչեւ 5 տարեկան՝ **250 դրամ,** 5-ից բարձր տարիքի անտառկազմող տնկիներ՝ **500 դրամ**, 5-ից բարձր տարիքի դեկորատիվ և տեխնիկական տնկիներ՝ **5.000 դրամ**:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿՎՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Կենդանիների բնակատեղերի (բնադրավայրերի, ձվադրավայրերի) ոչնչացման յուրաքանչյուր դեպքի համար վնասի հատուցման չափը հաշվարկվում է համապատասխան կենդանատեսակի *ապօրինի որսի* և (կամ) ոչնչացման համար՝ վերոնշյալ սակագների **եռապատիկի չափով,** կենդանիների վնասման դեպքում, եթե դա չի հանգեցնում դրանց ոչնչացմանը, վնասման յուրաքանչյուր դեպքի համար՝ վերոնշյալ սակագների **50 տոկոսի չափով**, թռչունների կամ սողունների յուրաքանչյուր ձվի ապօրինի հավաքման և (կամ) ոչնչացման համար՝ վերոնշյալ սակագների **50 տոկոսի չափով**, կեղծված, չհիմնավորված, ակնհայտ սուտ տեղեկատվության հիման վրա տրամադրված լիցենզիաների (թույլտվությունների) և կնքված պայմանագրերի հիման վրա իրականացված որսի հետևանքով սպանված (որսված) կենդանատեսակների յուրաքանչյուր միավորի համար՝ վերոնշյալ սակագների **եռապատիկի չափով**:

2. Ապօրինի ծառահատումների փաստը հատված ծառերի (կոճղերի) տեսքով հայտնաբերելու դեպքում վնասի հատուցման չափը հաշվարկվում է ծառի համապատասխան տեսակի ապօրինի օգտագործման համար՝ վերոնշյալ սակագների **եռապատիկի չափով:**

Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման գումարի պետական բյուջե գանձումը կատարվում է **բնապահպանական տեսչական մարմնի կողմից** իրավախախտման դեպքի վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա:

Արձանագրությունն ստանալուց հետո, իրավախախտողի կողմից 10-օրյա ժամկետում, բանկային համակարգի միջոցով ՀՀ պետական բյուջե վնասի հատուցման գումարն ինքնակամ չվճարելու դեպքում գումարի վճարումն ապահովվում է դատական կարգով՝ տեսչական մարմնի ներկայացրած հայցի հիման վրա:

Բուսական աշխարհին հասցված այլ վնասների, օրինակ, անտառային կուլտուրաների, բնական ծագում ունեցող մատղաշ ծառերի, ինքնացանի ոչնչացման և վնասման, բնության հատուկ պահպանվող տարածքներում, դենդրոպարկերում պտուղների, սերմերի, դեղաբույսերի և այլ օգտակար բույսերի ինքնակամ հավաքի, ապօրինի խոտհունձի, կենդանիների ապօրինի արածեցման, բնական արոտավայրերի և բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների աղտոտման և ապօրինի օգտագործման հատուցման տուգանքների սակագներին կարելի է ծանոթանալ «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկման սակագների մասին» ՀՀ օրենքում, որին կարելի է ծանոթանալ Բնապահպանական տեսչության մարմիններում կամ հետևյալ կայքում՝ http://www.parliament.am/drafts.php?sel=approved&lang=arm

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ

Սույն տեղեկատվական թերթիկում տեղեկատվություն է տրվում բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների, պատճառված վնասների հաշվարկման և տուգանքների գանձման կարգերի վերաբերյալ:

Մայիս, 2005

«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկման սակագների մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են կենդանական և բուսական աշխարհին հասցված վնասների հատուցման կարգն ու չափերը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ

1. ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների որսի և (կամ) ոչնչացման դեպքում՝ յուրաքանչյուր միավորի (անկախ տարիքից) համար գանձվում է.

ա) կաթնասուններ՝

25.000 դրամ՝

լայնականջ ոզնի, հարավային պայտաքիթ, մեհելիի պայտաքիթ, նատերերի գիշերային չղջիկ, ասիական լայնականջ չղջիկ, սովորական երկարաթեւ չղջիկ, ծալքաշրթունք լայնականջ չղջիկ, հնդկական վայրենակերպ կամ մացառախոզ, կովկասյան մկնիկ, հարավային ավազամուկ:

100.000 դրամ՝ հարավռուսական խայտաքիս,

200.000 դրամ՝ կովկասյան անտառակատու, մանուլ,

500.000 դրամ՝ կովկասյան ջրասամույր,

1.000.000 դրամ՝ անդրկովկասյան գորշ արջ,

3.000.000 դրամ՝ առաջավորասիական ընձառյուծ, բեզոարյան այծ, հայկական մուֆլոն:

բ) թռչուններ՝

15.000 դրամ՝

սեւավիզ քարաթռչնիկ, ասիական շիկապոչ քարաթռչնիկ, խայտաբղետ ժայռային կեռնեխ, եվրոպական կապույտ ժայռային կեռնեխ, իրանական կապտափող, իրանական սովորական ճոճիավ, սպիտակափող սոխակ, միջերկրածովային երաշտահավ, ալպիական սերինոս, կարճամատ ճնճղուկ, նախասիական անապատային խածկտիկ, ժայռային վարսակուկ, կարմրակտուց վարսակուկ:

20.000 դրամ՝ մեծ սպիտակ տառեխ:

25.000 դրամ՝

խայտաբղետ բադ, մոխրագույն բադ, լայնաքիթ բադ, տուրպան, ճախրուկ, կտցար ոտնացուպիկ, բզակտուց, կտցար կաչաղակ, հայկական արծաթափայլ ոռոր, կովկասյան թավոտն բվիկ, պարսկական կանաչ մեղվակեր, արևմտյան սև փայտփոր, արևելյան կարմրագլուխ շամփրուկ, եվրոպական ալպիական ճայ, եվրոպական սև ագռավ, եվրոպական ճուռականման շահրիկ, երգող շահրիկ, հայկական մեծ ժայռասիտեղ, կարմրաթև պատասող:

50.000 դրամ՝

մարմարյա մրտիմն, սավկա, սովորական դաշտային մկնաբազե, տափաստանային մկնաբազե, մարգագետնային մկնաբազե, եվրոպական տյուվիկ, սովորական աղավնաբազե, սովորական մանրաբազե, կովկասյան մարեհավ: **75.000 դրամ՝** մեծ ձկնկուլ, փոքր ձկնկուլ, քաջահավ, եվրոպական օձակեր, եվրոպական տափաստանային արծիվ, սովորական բլրային արծիվ: **100.000 դրամ՝** վարդագույն հավալուսն, գանգրափետուր հավալուսն, տարգալկտուց, սովորական ջրարծիվ, սովորական կարմիր ցին, մոխրագույն սագ: **125.000 դրամ՝** կասպիական հնդկահավ, մոխրագույն կռունկ: **150.000 դրամ՝** հարավեվրոպական բերկուտ, սովորական սպիտակապոչ արծիվ: **200.000 դրամ՝** սովորական ֆլամինգո, թշշան կարապ, կանչող կարապ: **250.000 դրամ՝** նախասիական մորուքավոր արծիվ, սեւ անգղ, սովորական սպիտակագլուխ անգղ, սովորական բալոբան, եվրոպական միջերկրածովային բազե, կովկասյան սապսան:

գ) սողուններ՝

15.000 դրամ՝ անդրկովկասյան տակիրային կլորագլուխ, խայտաբղետ մողեսիկ, երկարատ սցինկ, ոսկեգույն մաբույա, չեռնովի մերկաչք, փոքրասիական մողես: **20.000 դրամ՝** միջերկրածովյան կրիա: **30.000 դրամ՝** անդրկովկասյան սահնօձ, սևագլուխ ռինխոկալամուս, կովկասյան կատվաօձ, հայկական իժ:

դ) երկկենցաղներ և ձկներ՝

50.000 դրամ՝ Սևանի իշխան, **25.000 դրամ՝** Սևանի բեղլու, **10.000 դրամ՝** սխտորագորտ:

ե) ՀՀ Կարմիր գրքում չգրանցված

այլ կենդանատեսակներ՝ ոզնի՝ **2. 000 դրամ.,** չղջիկներ՝ **2. 000 դրամ**, նապաստակ՝ **8 000 դրամ,** մշկամուկ, ճահճակուղբ՝ **5. 000 դրամ**, սկյուռ՝ **8. 000 դրամ**, զոլավոր բորենի՝ **250. 000 դրամ**, լուսան, տափաստանային կատու, եղեգնակատու՝ **200. 000 դրամ**, աքիսազգիներ՝ **25. 000 դրամ**, վայրի խոզ՝ **200. 000 դրամ**, ազնվացեղ եղջերու՝ **1. 000. 000 դրամ**, այծյամ՝ **250. 000 դրամ**, այլ կաթնասունների տեսակներ (բացի վնասակար կրծողներից՝ առնետներ, մկներ, համստեր, դաշտամուկ)՝ **1. 000 դրամ,**

այլ թռչնատեսակներ՝

տառեխներ՝ **8. 000 դրամ**, բադեր՝ **5. 000 դրամ**, սագեր՝ **10. 000 դրամ**, ցերեկային և գիշերային գիշատիչներ՝ **20. 000 դրամ**, փասիան, թուրաջ՝ **20. 000 դրամ,** կաքավներ՝ **5. 000 դրամ**, լոր՝ **2. 000 դրամ**, սև փարփար՝ **3. 000 դրամ**, ջրածիծառներ և որորներ՝ **5. 000 դրամ**, արոսներ՝ **100. 000 դրամ**, աղավնիներ՝ **3. 000 դրամ**, կկու՝ **2. 000 դրամ**, մանգաղաթևեր՝ **3. 000 դրամ**, այլ թռչունների տեսակներ (բացի կաչաղակից, մոխրագույն ագռավից)՝ **1. 000 դրամ,**

այլ տեսակներ՝ գյուրզա՝ **15. 000 դրամ**, այլ տեսակի օձեր՝ **5. 000 դրամ**, այլ տեսակի մողեսներ՝ **1. 000 դրամ**, գետի իշխան կարմրախայտ՝ **5. 000 դրամ**, այլ տեսակի ձկներ՝ **1. 000 դրամ**, այլ տեսակի երկկենցաղներ՝ **2. 000 դրամ**:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ

2. Բնապահպանական իրավախախտումների հետևանքով բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման համար գանձվում է.

1) ծառերի և թփերի հատման, ոչնչացման և մինչև աճի դադարեցման աստիճանը վնասման դեպքում, յուրաքանչյուր միավորի համար՝

ա) արժեքավոր (կաղնի, հաճարենի, հացենի, լորենի, թխկի և սոճենի) և հազվագյուտ (հունական ընկուզենի, արջատխլի, սոսի, գիհի, կարմրածառ և պտղատու ծառատեսակներ) տեսակները՝ ըստ ծառի կոճղի տրամագծի (սանտիմետրերով)՝

մինչև 4սմ՝ **4. 500 դրամ**, 4.1 - 8.0՝ **6. 000 դրամ**, 8.1 - 12.0՝ **7.500 դրամ**, 12.1 - 16.0՝ **10. 000 դրամ**, 16.1 - 20.0՝ **15. 000 դրամ**, 20.1 - 24.0՝ **17. 500 դրամ**, 24.1 - 28.0՝ **20. 000 դրամ,** 28.1 – 30՝ **22. 500 դրամ**, 30-ից ավելի յուրաքանչյուր սմ-ի համար՝ **1. 500 դրամ:**

բ) այլ տեսակներ՝ ըստ ծառի կոճղի տրամագծի (սանտիմետրերով)՝

մինչև 4սմ՝ **1.000 դրամ**, 4.1 - 8.0՝ **2.000 դրամ**, 8.1 - 12.0՝ **3.000 դրամ**, 12.1 - 16.0՝ **4.000 դրամ**, 16.1 - 20.0՝ **5.000 դրամ**, 20.1 - 24.0՝ **6.000 դրամ**, 24.1 - 28.0՝ **7.500 դրամ**, 28.1 – 30՝ **10.000 դրամ**, 30-ից ավելի յուրաքանչյուր սմ-ի համար՝ **500 դրամ:**

ՀՀ Կարմիր գրքում գրանցված, ինչպես նաև բնության հուշարձանի կարգավիճակ ունեցող ծառատեսակների և թփերի ապօրինի հատման կամ ոչնչացման դեպքում վնասի հատուցման չափը հաշվարկվում է վերոնշյալ **սակագների տասնապատիկի չափով:**

Բնության հատուկ պահպանվող տարածքներում, դենդրոպարկերում և անտառպուրակներում ծառատեսակների և թփերի ապօրինի հատման կամ ոչնչացման դեպքում վնասի հատուցման չափը հաշվարկվում է վերոնշյալ **սակագների հնգապատիկի չափով:**

Արհեստական անտառներում բնակավայրերի ընդհանուր օգտագործման վայրերի ծառատեսակների և թփերի ապօրինի հատման կամ ոչնչացման դեպքում վնասի հատուցման չափը հաշվարկվում վերոնշյալ **սակագների՝** Երևան քաղաքում՝ **տասնապատիկի**, իսկ այլ բնակավայրերում՝ **եռապատիկի** չափով:

Անտառային կուլտուրաների, անտառվերականգն-